№ 35 ՄԱՐՏԻ 8 (20) 1878 ՄԱՐՏԻ 8 (20) № 35

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Ղատուրեանի խանութում

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ժողովուրդ և ինտելիգէնցիա։—Ներքին տեսութիւն։ Նինա Անդրեեվկու սպանման գործը։ Նամակ Քութայիսից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Թիւրքիա։ «Մշակի» հեռագիրներ։—Ցայտարարութիւններ։—Տեղեկացոյց։—Բանասիրական։ Մաղօի Օդան։

ԺՈՂՈՎՈՒՐԴ ԵՒ ԻՆՏԵԼԻԳԷՆՑԻԱ

—

Ի՞նչ է պատճառը որ «Մշակը» իր գոյութեան վեց տարվայ ընթացքում չը կարողացաւ գրաւել մեր ինտելիգէնցիայի ուշադրութիւնը և համակրութիւնը,—ահա՛ այն հարցը որ գուցէ շատերը իրանք իրանց առաջարկում են։

Պատասխանը շատ պարզ է։

Մեր ինտելիգէնցիան իր ոգով, իր դաստիարակութեամբ, իր դիրքով, իր ճաշակներով, իր հայեացքներով ու համոզմունքներով բոլորովին մի անջատված մարմին է կազմում Հայոց ժողովրդի միջին և ստորին դասակարգերից։ Նա նախ և առաջ չը գիտէ իր մայրենի լեզուն, կամ խորշում է նրանից, նա չը գիտէ, չէ ճանաչում ժողովրդի կեանքը, նա կազմվել է թէև ժողովրդի նոյն դասակարգերից, որոնց գոյութիւնը անտես է առնում, (որովհետև մենք հայերս չունենք արիստոկրատիա), բայց ժողովրդի միջից դուրս գալուց յետոյ բոլորովին անջատվել է նրանից, կապված չը լինելով նրա հետ ոչինչ տնտեսական, հասարակական կամ բարոյական խնդիրներով։

Մեր ինտելիգէնցիան որ մեզանում արիստոկրատիայի դեր է խաղում, կազմված է մեր պաշտօնեաների կամ ունևոր մարդիկների դասից։ Դրա և մեր ժողովրդի կեանքի մէջ անկարելի է գտնել ոչ մի կէտ, որտեղ այդ միմեանցից անջատված դասակարգերը միմեանց մօտենային, անկարելի է գտնել ոչ մի կէտ, որ երկուսին էլ ընդհանուր լինէր։ Մեզանում անհետացել է այն պատմական արիստոկրատիան, պատմութեան հաստատ հողի և աւանդական անխախտ յիշատակների վրա հիմնված ազնուապետական դասակարգը, որ նման լինէր, օրինակ, Ֆրանսիայի լուսաւորված, փայլուն արիստոկրատիային, որ երկար ժամանակ առաջնորդում էր իր հայրենիքի մտաւոր կեանքը, մեզանում չը կայ Անգլիայի, կամ մինչև անգամ Ռուսաստանի ազնուապետական դասի պէս մի դասակարգ, որ ինչքան և տարբեր լինէր ամբոխից, այնու ամենայնիւ սերտ կապերով կապված է ժողովրդի հետ իր շահերի մէջ, որովհետև կազմված է հողի կալուածատէրերից։

Մեզանում լուսաւորված, առաջադէմ, մտաւորապէս առաջադէմ դասը, ինտելիգէնցիան կազմվել է այսպէս՝ պաշտօնեան, կամ հարստացած վաճառականը, բոլորովին անջատված լինելով իրանց կեանքի եղանակով, իրանց շահերով ժողովրդի կեանքի եղանակից և շահերից՝ միջոց են ունեցել ուսում տալ իրանց զաւակներին, իրանց տղային կամ աղջկան։ Ու այդպէս դոյացել է մի նոր սերունդ որ գուցէ հաստատ, բայց ժողովրդին կատարելապէս օտար կըրթութիւն է ստացել։

Դիցուք նրան, այդ ինտելիգէնցիային, հետաքրքրում է ընդհանուր մարդկային դիտութիւնը, ամբողջ աշխարհի քաղաքական կեանքը, գիտութեան մէջ արած նոր գիւտերը, ընդհանուր եւրոպական և մասնաւորապէս՝ ռուսաց գրականութիւնը,—բայց նրան չէ կարող հետաքրքրել, չէ կարող գրաւել ոչ հայ թշուառ երկրագործի, ոչ էլ արուեստաւորի կեանքը և նրանց կարիքները։ Մեր ինտելիգէնցիան սրանց մասին ոչինչ տեղեկութիւն էլ չունի, և չէ էլ կարող նրանցով զբաղվել, նրանցով հետաքրքրվել, որովհետև ոչինչ կապեր չունի ժողովրդի հետ։

Դիցուք որ մեր ինտելիգէնցիան այնքան դարդակ չէ որ նրան հետաքրքրէին միմիայն քաղաքի սկանդալները, պարահանդէսները, կոնցէրտները, կլուբները, Կրուժոկ և այլն,—դիցուք թէ նրան հետաքրքրում է ընդհանուր գիտութիւնը, եւրոպական գրականութեան վերջին արդիւնքները։ և այլն։ Բայց այնու ամենայնիւ վստահութեամբ կարելի է ասել, որ նրան չէ գրաւում և չէ կարող գրաւել հայոց ժողովրդի կեանքը։

Ու յանկարծ սկսում է հրատարակվել մի հայոց լրագիր (այն էլ հայոց), որ սկսում է խօսել ազգային գրականութեան վրա, ծխական և հոգևոր դպրոցների վրա, գիւղական քահանայի պարտաւորութիւնների վրա, գիւղացիների մէջ փոխատու ընկերութիւնները հիմնելու անհրաժեշտութեան վրա, հայ գիւղացու թշուառ և անմաքուր ապրելու վրա, քաղաքային արուեստաւորների կարիքների վրա, և այլն....

ՄԱՂՕԻ ՕԴԱՆ

—

I

Շաբաթ օրը առաւօտից արդէն պատվիրել էի իմ Տարիէլ խմբէլ ծառային, որ մինչև ճաշ պաշարեղէններ գնէր, դարսէր խուրջինը և ինքն էլ պատրաստվէր խուրջինը շալակելու։

—Ո՞ր կողմը, հարցրեց իմ հաւատարիմ ծառան վրացերէն։

—Ո՞րսի կերթանք ճաշից յետոյ, էգուց կիրակի է, երկուշաբթի էլ տօն, ուրեմն երկու և կէս օր ազատ ունենք։ Կաքաւները հիմա չաղ են, ասացի ես։

—Ո՛հ, չէնի կի ճիրիմէ լամազո քալօ դա թօփօ, *) կանչեց նա ուրախ։ Էյ, Տօպս, էյ, շուացրեց նա իմ ցեսերին, ախօտ պայդամ, կուրդղել կուչայի հը. խօշիչ։ **)

Ճաշի ժամանակ ամեն բան պատրաստ էր իմ սենեակում. խուրջինի մէջ գինի ու արաղ, մի կտոր սուկի, հաց ու պանիր կար, իսկ սենեակի անկիւնում չորս որսորդական հրացաններ բոլոր պարագաներով, որոնց մօտ պըպզել էր Տօպսը և մի ոտը բարձրացած դողում էր անհամբերութենից։

Որսի գնացողները չորս հոգի էինք։ Ես, իմ ծառան և երկու ընկերներս՝ Սիմօնը և Սամսօնը։ Առաջինը մի շատ սովորական կարճատես մարդ էր, երբէք իր հրացանի ծայրից հեռու չէր տեսնում և միշտ ամառ, ձմեռ, ցրտին և չոգին դողում էր. միշտ մրսում էր։ Իսկ երկրորդը մի լաւ ընկեր էր։ Սամսօնը ամեն մարդու հետ չէր խօսի, առհասարակ փոքր ի շատէ բարձր պաշտօն ունեցողի հետ լայեղ չէր անի խօսել, բայց երբ ընկնում էր իր ընկերների շրջանը, որոնք նրան ճանաչում էին և որոնց նա սրտով սիրում էր, այդպիսի դէպքերում Սամսօնը չէր դադարում։ Նա կամ թուրքի կանկան կը պար գար, կամ մէկ անտիցենզուրական անեկդոտ կը պատմէր, կամ եթէ ոչինչ չէր ունենայ անելու, կսկսէր իր ընկերներին պաչպչել։ Ի՞նչ ասէին նրան ընկերները, ինչ հրամայէին նա կը կատարէր, բայց երբ իր իշխանաւորը մի բան հրամայէր՝ կը կատարէր, բայց ինքն իրան մի լաւ յիշոց կը տար։ Սամսօնս մեծ մարդ էր, արդէն երկրորդ կնոջ վրա էր պսակված, բայց այնու ամենայնիւ նա վախում էր իր պառաւ նանից. առանց սրա թոյլատուութեան ոչ մի տեղ չէր գնայ։ Ես էլ սովորել էի նանի ձեը և միշտ խաբում էի նրան։ Մէկ օր ասում էի, որ հիւանդ եմ, տանում եմ Սամսօնին ինձ մօտ, միւս անգամ, որ երևելի ժողով կայ և մեծ գործեր ունենք և այլն։ Խաբվում էր պառաւը։

—Ա՛յ սև սրտով, ասում էր նա իր որդուն, բա մի գիշեր քո տանը չը պըտի քնես, այ աւրա՛յ։

—Դէ, նանի ինչ անեմ, կը պատասխանէր սովորաբար Սամսօնը միրուքը տըմբացնելով և խոնարհ դէմք առնելով, դէ տեսնում ես եկել է, ասում հիւանդ եմ. բա խաթրը կոտրեմ։ Ու էսպիսի շատ բաներով նա խաբում էր իր նանին։ Այդ շաբաթ օրն էլ խաբեցինք նանին, ասացինք որ մի եպիսկոպոս է գալի, որ տեղական սրբազանը հրամայել է Սամսօնին (սա հոգևոր իշխանութեան էր ծառայում), որ եկողին դիմաւորէ և այլն։

—Դէ գնա, այ որդի, սուրբաղանի աչը քը պըհապան։ Այ տղայ, կանչեց նա շտապով որդուն, կաց, մոմ տամ Քանաքեռայ մատուռումը վառիր։

Մոմերը ստանալուց յետոյ Սամսօնին տարայ։ Էսպէս էր իմ Սամսօնը, էն լաւ Սամսօնը, որին միշտ կով էի կանչում և նա ուրախանում էր։ Մի սովորութիւն էլ ունէր նա. հէնց որ ուսին ձեռք դնէին կը ծըռվէր և կը բղաւէր, էլ չը գիտեմ հանաքի համար էր անում, թէ երեխայ ժամանակից նրա ուսը վնասված էր։ Այսպէս ճաչեցինք չորսով սենեակումս, գցեցինք Բաքոսի կենացը, Սամսօնը ասաց իր սովորական «եա Ալի» արաղ խմելիս և ճանապարհ ընկանք Երևանի փողոցներով դէպի Քանաքէռ։ Տօպսը պոչը ոլորած, ուրախ հաչելով առաջ ընկաւ, իսկ Տարիէլը, իր ներկայութիւնը ցոյց տալու համար կանչեց։

—Назадъ, Տօպս, время не пришли. օհ չէնի կի ճիրիմէ լամազո քալօ դա թօփօ...

Դուրս եկանք Երևանից, այդ թողի և աղբի մայրաքաղաքից և ընկանք Երևանի խըճուղին, վերջապէս Քանաքէռի տակը, այնտեղ, ուր ճանապարհը բաժանվում է, մէկը տանում է դէպի Քանաքէռ, իսկ միւսը դէպի Ծարաւ աղբիւր, մենք չոկ չոկ գնացինք, որսորդութեան կանոնին համեմատ։ Հիմա լաւ եմ համարում, ընթերցող, ասել քեզ որ մեզանից ոչ ոք որսորդ չէր և թէպէտ շատ անգամ այսպէս թափառում էինք, բայց աւելի «լօթութեան» համար, ինչպէս ասում է Թիֆլիսեցին, քան թէ որսորդութեան համար. դրա ապացոյցը մեր չիքը խուրջինն էր։ Մեր քաղդն էր, եթէ մի կոյր նուպաստակ կը պատահէր, կամ մէկ ոտը կտրած կաքաւ. երեք հրացան միասին կարճակէինք և Տարիէլն ու Տօպս, միմեանց առաջ կտրելով կը վազէին որսը բերելու։ Այդ օրը մեզ ոչինչ չէր պատահում, թէպէտ շատ էինք շրջում և Տօպսն էլ անդադար քարից քար, սարից սար էր անցնում. ամեն տեղ հոտ էր առնում, ամեն տեղ փնտռում էր, բայց 'ի զուր ոչինչ չէր պատահում։

—Աղա, վայ, վերջապէս լռութիւնը ընդհատեց Սամսօնը, գիտեմ ինչի որս չէ պատահում։

—Ի՞նչի, հարցրի ես, գուցէ ժամանակը չէ, դեռ վաղ է։

—Չէ, տօ ախար մոռացանք քար շուր տայինք քաղաքի մէջ։ Բա չը տեսար, որ տէր Զամչէն պատահեց ճանապարհին, վայ նրա գլուխը, թաղեմ արդի կարասում։

Տեսնելով, որ իր սրախօսութիւնը ոչ ոքի չը ծիծաղեցրեց, Սամսօնը սկսեց երգել։ Լաւ էր երգում փուչը։ Մանաւանդ այն երգերը, որոնց եղանակը պարսկականից էր վեր առած։

«Ի ննջմանէդ արքայական զարթիր, նազելիդ իմ, զարթիր, եհաս նշոյլ արեգական զարթիր, աստղիկդ իմ, զարթիր», կանչեց Սամսօնը ոգևոր-

---

*) Հոգուդ մատաղ սիրուն աղջիկ ու հրացան։

**) Որսի կերթանք նապաստակ կուտես, կամենամ ես։

Հայերեն գիր, կիրառում և հասարակություն

Հ. Ս.

Վերջերս Հանրագիտարանի հրատարակչությունը լույս ընծայեց Հայոց գրերի 1600-ամյակին նվիրված հոբելյանական ժողովածուն՝ «Հայոց գիր, կիրառում և հասարակություն» խորագրով։ Գիրքը ներառում է գրագետ հասարակության ներկայացուցիչների, գրողների, գրականագետների, մանկավարժների, լեզվաբանների, պատմաբանների, հրատարակչների, գրադարանավարների, գրաֆիստների, տպագրիչների, գրքի նկարիչների, գրքի հրատարակչության, գրքի առևտրի, գրադարանների, գրքի ոլորտի մասնագետների, ինչպես նաև գրքի ոլորտի ուսանողների հարցազրույցներ։ Հարցազրույցներ են տրվել նաև գրքի ոլորտի ոչ հայ մասնագետներին։ Գրքի հեղինակներ են Ռուբեն Ավագյանը, Գոհար Ասատրյանը, Գոհար Գրիգորյանը, Գոհար Գրիգորյանը, Գոհար Գրիգոր

ՆԱՄԱԿ ՔՈՒԹԱՅԻՍԻՑ

—

Մարտի 1

Փետրվարի 23-ին Քութայիսի հայոց եկեղեցին տօնեց սրբոց Վարդանանց զօրավարաց յիշատակը։ Այս տօնի առիթով փետրվարի 18-ին, կիրակի օրը պատարագիչ հայր Եարալեանցը կարճ կերպով խօսեց և յայտնեց, որ 23-ին փետրվարի մեր ծխական երկսեռ ուսումնարանը կը տօնէ այդ օրվայ յիշատակը և որ ուսումնարանի վարչութիւնը կարգադրած է որ վիճակախաղ լինի աշակերտուհիների ձեռագործներից։ Տէր հայրը յայտնեց այն յոյսը, որ այդ հանդէսին Քութայիսի հայերը ուրախութեամբ կը մասնակցեն և չեն խնայի իրանց կօպէկները ուսումնարանի առաջադիմութեան համար։

Վարդանանց տօնի օրը Ս. պատարագի վերջանալուց յետոյ եկեղեցում կատարվեցաւ հոգեհանգիստը։ Այդ օրը հայր Եարալեանցը աւելի ընդարձակեց իր քարոզը Վարդանանց տօնի առիթով։ Այդտեղ համեմատեց V դարու հայ ժողովուրդը ու հոգևորականները այժմեան ժողովրդի և հոգևորականների հետ և յայտնեց այն իրաւացի միտքը, որ այժմեան հոգևորականութիւնը աւելի եկեղեցական արարողութիւններ կատարելով է զբաղված, քան թէ ժողովրդին առաջնորդելով։

Մեզ համար շատ միխիթարական է լսել որ մեր հոգևորականները իրանք զգալով իրանց պակասութիւնը, պարզ խոստովանվում են այդ, և չեն ուզում իզուր տեղը թող փչել հասարակ ժողովրդի աչքին։

Մեր հոգևոր հայրերը, բացի եկեղեցական արարողութիւններից, շատ բան ունեն անելու, բայց դժբաղդաբար պատրաստ չեն այդ վսեմ պարտականութիւնը կատարելու։ Պատճառը նրանց տգիտութիւնն է։ Բաւական է մի եպիսկոպոսին ներկայանալ հարիւր բուբլով և դուք արդէն քահանայ էք. ձեզանից էլ չեն պահանջի՝ ոչ գիտութիւն և ոչ էլ բարոյականութիւն. նրանց համար կարծես այդ աւելորդ բան է։ Իսկ ինչ որ վերաբերում է ուսում առած երիտասարդութեանը՝ նա չէ ցանկանում քահանայ լինել, ոչ թէ նրա համար որ քահանայութիւնը անարժան պաշտօն է, քաւ լիցի, այլ նրա համար որ քահանաները նիւթապէս անապահով են, մուրացկան են, և երկրորդ, որ պէտք է ենթարկվեն անզարգացած բարձրաստիճանաւորների կամայականութեանը։

Կանանց առիթով տէր-հայրը յայտնեց, որ V դարու հայ կանայքը՝ շատ աստուածապաշտ և ազգասէր էին. իսկ ինչ վերաբերում է այժմեան կանանց, ասաց տէր-հայր, լռում եմ։

Լռելը լաւ բան է, բայց ոչ ամեն ժամանակ՝ Այդտեղ հարկաւոր է կանանց հետ շուտ շուտ խօսել՝ հասկացնել թէ ինչ է իրանց պարտաւորութիւնները։ Ամենքիս լաւ յայտնի է, որ նրանք զարգացած չեն—ուրեմն իրանց պարտականութիւնները չեն հասկանում։ Լռելու տեղ հարկաւոր է ցոյց տալ նրանց պակասութիւնները, որոնց պատճառը իհարկէ տգիտութիւնն է։ Հարկաւոր է զգուշացնել, որ դէպի իրանց զաւակները ունեցած պարտականութիւնները ճշդութեամբ կատարեն, որ ապագայում աղատ լինեն մեղադրանքներից։ Նրանց պէտք է ստիպել ժամանակի հոսանքին հետևելու։

Մեր քահանաների սրբազան պարտաւորութիւնն է՝ կարողութեան չափ աշխատել իրանց հօտը զարգացնելու։ Եթէ մեր քահանաները իրանց թոյլ են զգում այժմեան քաղաքակրթութեան թարգման հանդիսանալու, գոնէ իրանց համար առաջնորդ ընդունեն մեր պարբերական հրատարակութիւնները և նրանց մէջ յայտնած մտքերը քարոզեն եկեղեցիներում։ Այսպէսով մեծ ծառայութիւն արած կը լինեն՝ հասարակութիւնը օր ըստ օրէ կը հեռաքրքրվի, կը սովորի մտածել և կը զարգանայ։

Երեկոյեան ժամը վերջանալուց յետոյ, կանանց մեծ բազմութիւն հաւաքվեցաւ ուսումնարանում, որ բաղկացած է երկու սենեակից։ Այդ սենեակները միանում են մի դռնով, որ այն ժամանակ բաց էր։ Սենեակներից առաջինը, որ աշակերտների դասատունն է, պատրաստված էր աթոռներով հասարակութեան համար, իսկ միւսը՝ աշակերտուհիների դասատունը զարդարած էր վիճակախաղի համար իրեղէններով։ Այդ իրեղէնները մեծ մասամբ բաղկացած էին՝ խանութներից հաւաքված իրերից, իսկ մնացածը՝ աշակերտուհիների ձեռագործներից, որոնք իմ կարծիքով բաւականին լաւ էին։ Այդ տեղ տեսայ պատի վրա կպցրած Վարդան զօրավարի լուսանկար պատկերը, որի տակը կպցրած էր մի ձեռագործ, որի մէջ տեղը գրած էր ասղագործ տառերով «Վարդան Մամիկոնեան»։ Այդ ձեռագործը, ինչպէս տեղեկացայ վարժուհի տ. Ղազարեանցի, մասամբ նոյն իսկ վարժուհու և մասամբ աշակերտուհի Ռաֆայելեանցի աշխատանքն էր։ Վարժուհին յայտնեց յոյս, որ կարելի է առաջադիմութիւն անել ձեռագործութեան մէջ, եթէ դրա համար անհրաժեշտ պարագաները ունենային։ Այս բանի վրա հրաւիրում եմ ուսումնարանի վարչութեան առանձին ուշադրութիւնը։

Հանդէսը բացվեցաւ հայերէն լեզուի ուսուցչի երկար ճառով, որի նպատակն էր՝ կարողութեան չափ բացատրել կրթութեան անհրաժեշտութիւնը և կանանց նշանակութիւնը։ Բացի դրանից պ. ուսուցիչը յայտնեց ուսումնարանի նիւթապէս անապահով դրութիւնը։

Այդ երգը, պ. ուսուցիչ, առաջի անգամ չէ որ մենք լսում ենք, բայց չը նայելով մեր բղավելուն, մեր անդադար գանգատներին, դեռ ևս մեզ ոչ ոք չէ ցոյց տուել՝ թէ մեր ուսումնարանը ինչ ունի, ինչով է ապրում։ Իհարկէ մեր սրբազան պարտականութիւնն է օգնել մեր ուսումնարանին, եթէ նա կարօտ է մեր օգնութեանը, բայց օգնելուց առաջ, հարկաւոր է մեզ տեղեկանալ թէ ուր է գնում, կամ ինչպէս են ծախսվում ուսումնարանի փողերը։

1876 թ-ին, նոր հոգաբարձուներ ընտրելու ժամանակ, հայր Եարալեանցը մեզ խոստացաւ որ ինքը արդէն պատրաստում է ուսումնարանի անցեալ և ներկայ եկամուտքի հաշիւը և թէ կարճ միջոցում այդ հաշիւը պէտք է տպվէր «Արարատ» ամսագրի մէջ։ Տէր-հօր տուած այդ խոստմունքը դեռ ևս կարծեմ լոկ խոստմունք է մնում և ով գիտէ երբ կիրագործվի.....

Այդ հանդէսին յայտնվեցաւ, որ կանայքը աւելի են համակրում ուսումնարանին, քան թէ տղամարդիկ, որոնցից շատ քիչ էին այնտեղ, այն էլ մեծ մասը ուրիշ տեղերից եկած մարդիկ էին և ոչ բուն Քութայիսեցիք։

Ուսումնարանի վարչութիւնը թէյ էր պատրաստել հասարակութեան համար, այն նպատակով, որ ցանկացողը, վճարելով ամեն մի բաժակին քսանական կօպէկ, կարող էր իր ծարաւը յագեցնել, բայց այդ մասին մեզ չէին յայտնել ևս կարծում էի, որ ուսումնարանի վարչութիւնը անքաղաքավարի վարվեց շատերի հետ՝ մի քանիսին հրաւիրելով թէյ խմելու, իսկ շատերի վրա ուշադրութիւնն էլ չը դարձնելով։ Ես իմ կողմից պատրաստ էի 20 կօպ. տեղ 40 կօպ. վճարելու, եթէ ինձ մի բաժակ թէյ խմացնէին, որովհետև շատ ծարաւ էի, այդ երեկոյեան իմ տանը թէյ չը խմելու պատճառով։ Այդ գաղտնիքը, որ թէյին փող էր վճարվում, այսօր միայն իմացայ։

Այդ հանդէսից գոյացաւ՝ 100 բուբլ ու 40 կօպէկ։

Վերջացնելով նամակս յայտնում եմ, ու Քութայիսի հայերը պէտք է շնորհակալ լինեն հայր Եարալեանցից, որ այդ հանդէսը գլուխ բերելու գլխաւոր պատճառը եղաւ։

Մի հայ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի ուղղափառ Սինոդի կանտօրայի գանձապետը վերցրել է գանձարանից 30,000 բուբլ։ Պոլիցիան արդէն գործ է կազմել և յանձնել է քննչին։

—

Լսում ենք, որ մարտի 5-ին Մուխրանսկի փողոցի ներքև կուր գետի վրա եղող պարոմի թոկը կտրվել է և պարոմի վրա նստողներից մէկը խեղդուել է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱ

—

Այս օրերս ստացանք Կ. Պոլսից մի քանի լրագիրներ որոնք լցված են չէրքէզների և բաշեբուզուկների գործած անգթութիւնների նկարագրութիւններով։ Այդ բարբարոսները Եւրոպական Թիւրքիայից խումբ խումբ գալիս են Կ. Պոլիս, ճանապարհի վրա քրիստոնեաներին կոտորելով, օրիորդներին և երեխաներին իրանց հետ տանելով, գիւղերը և եկեղեցիները այրելով և ամեն բան կողոպտելով։ Թիւրքաց կառավարութիւնը ուզում է այժմ այդ բարբարոսներին ուղարկել Հայաստան։ Կարծես թէ քուրդերը բաւական չէին հայերին ճնշելու և հարստահարելու համար, այժմ արիւնարբու չէրքէզներն էլ ուղարկվում են Հայաստան։ Այսպէս ուրեմն հայերը պիտի վայելեն իրանց հաւատարմութեան պտուղները, ինչպէս Սուլթան Համիդ խոստացել էր Ներսէս պատրիարքին։

Մենք մեր կողմից ոչինչ չաւելացնելով, կը դնենք այստեղ մի քանի քաղվածներ օսմանեան պարլամենտում երեսփոխանների խօսացածներից, յունվարի 18-ին կայացած նըստում որ թարգմանում ենք «La Turquie» լրագրից։

Ղ օ ն ե ա յ ի ե ր ե ս փ ո խ ա ն Սիմոնաքի էֆէնդի.—Լրագիրներում կարդում ենք որ չէրքէզները ամեն տեղ յայտնապէս ծախում են եկեղեցիներից կողոպտած սրբազան անօթները և եկեղեցական զգեստները։ Ընդդրում եմ մեծապատիւ երեսփոխաններից որ հարկաւոր եղած տեղերը պատուիրելով արգելն այդ գործը։ Այժմ այդ չէրքէզները ուղարկվում են Անատոլիա (Հայաստան) և հարիւրներով բնակեցնում են գիւղերում։ Ուրեմն մօտ ժամանակներ դրանք կը սկսեն այն տեղերն էլ կողոպտել։ Մենք կարծում ենք թէ աւելի յարմար կը լինի որ իրարից հեռու գտնվող գիւղերում բնակեցնեն, ամեն մի գիւղ 5 կամ 6 ընտանիք միայն ուղարկելով այդ չէրքէզներից։

Կ. Պ օ լ ս ի ե ր ե ս փ ո խ ա ն Յ ա կ ո բ էֆ.—Կը յիշեցնեմ որ դեռ ոչ մի կարգադրութիւն չէ եղած հողագործական կենդանիների համար որոնք չէրքէզները կողոպտելով Կ. Պոլիս բերած, ծախում են ամենացածր գներով։

Ն ա խ ա գ ա հ.—Կառավարութիւնը մի քանի կարգադրութիւններ արած է այդ մասին։ Ես կաբինէտի նախագահի մօտ գտնվում էի երբ նա սաստիկ հրամաններ ուղարկեց որ այսուհետև չը ծախեն այդ կենդանիները որոնք կառավարութիւնը չէրքէզներից առնելով պիտի պահէ և գիւղացիների ուղած ժամանակ իրանց պիտի վերադարձնէ։

Ռ ո ւ ս չ ո ւ ք ի ե ր ե ս փ ո խ ա ն Պ է տ ր ա քի էֆ.—Կ. Պոլիս քաղաքը մի ընդարձակ սպանդանոց է դառել։ Ամեն փողոցներում տրօտուարների վրա մորթում են անասուններին և հոխան մինչև 2 ղրուշի (շահի) միս են ծախում։ Գալատայի կամուրջից մինչև որ այստեղ եկայ, յիսունից աւելի մորթված եղներ տեսայ փողոցներում։ Այդ կենդանիները դեռ ծախում են և ձեր ասածներից ոչ մէկը դեռ չէ գործադրված։ Դրանից աւելի ծանր մի այլ հարց կայ որի վրա երեսփոխանական ժողովը պարտաւոր է ուշադրութիւն դարձնել։ Այդ յափշտակիչ, վայրենի և չարաբարոյ չէրքէզները անլուր բարբարոսութիւններ գործելուց յետոյ երբ սկսել են Կ. Պոլիս գալ, հազարաւոր երեխաներին կողոպտել են, թէ տղայ և թէ աղջիկ, և այսօր այդ երեխաներին իբրև գերի ծախում են փողոցներում։ Հայերը և յոյները, մանաւանդ յոյները իրանց պատրիարքարանի միջոցով, բաւական գտնեցին այդ թշուառ երեխաներից, բայց չէրքէզների մօտ դեռ գտնվում են 3,000-ից աւելի երեխաներ, թէ տղայ և թէ աղջիկ։ Մինչև անգամ բոշաներ (զինգեան) այժմ այդ առևտուրով զբաղվում են։ Երեսփոխանական ժողովը՝ փոխանակ անասունների հարցով անցկացնելու իր բոլոր ժամանակը, հարկաւոր է որ մի քիչ էլ ուշադրութիւն դարձնի մարդկային ազգից եղող այս արարածների վրա, որովհետև մեզ համար մեծ անպատուութիւն է մեր մայրաքաղաքում մարդ ծախվելը։ Ուրեմն ես կառաջարկեմ մի գիր ուղարկել դէպի Բ. Դուռը, այդ թշուառ երեխաներին ազատելու և յանցաւորներին հրապարակով պատժելու համար որ ուրիշներին էլ չար օրինակ չը լինեն։

Ն ա խ ա գ ա հ.—Իրաւի, ցաւալի բաներ են դրանք։ Երեսփոխանական ժողովը այդ եղելութիւնների համար ցաւ է յայտնում։

Զմիւռնիի երեսփոխան Մինա էֆ. Այդ մարդավաճառութիւնը միայն Կ. Պոլսում չէ լինում, այլ ամեն նահանգներ և ամեն տեղեր ուր չէրքէզներ գտնվում են։ Ահա եղբայրս Զմիւռնից մի նամակ է գրել ինձ ուր չէրքէզներին 18 տարեկան մի օրիորդ ծախելու պատմութիւնն է անում։ Այժմ Զմիւռնում գտնվում են 20,000-ից աւելի չէրքէզներ և գաղթականներ։ Հարկաւոր չէ մեր քաղաքները լցնել այդ անկարգ, անկանոն արարածներով։

Նաֆի էֆ.—Այդպիսի եղելութիւններ պատմած ժամանակ հարկաւոր է նրանց մանրամասնութիւններն էլ ամբողջապէս պատմել։ Մինա էֆէնդին պարտաւոր է այդ դեռահասակ աղջկայ անունը, ազգանունը և այլ մանրամասնութիւններն էլ յայտնել մեզ։

Մինա էֆ.—Այդ դժուար չէ։ Բացի դրանից, ես դեռ անցած օր տեղեկութիւն տուեցի ձեզ, չէրքէզներին Բուրգասից Կ. Պոլիս բերած Դօննա անուն աղջկայ մասին։

Խալիլ Ղանէմէ էֆ.—Դէպքութիւնը արդէն կատարված է. այժմ հարկաւոր է մտածել դրան արգելելու և ապագայի համար կարգադրութիւններ անելու մասին։

Սրանից յետոյ առաջարկվում է այն հարցը թէ ուր յարմար է բնակեցնել չէրքէզներին։ Կաստամունիի երեսփոխան Սալիմ բէկ յայտնելով թէ արևմտեան Տրիպոլիում ընդարձակ հողեր կան բնակելու և երկրագործութիւն անելու համար, առաջարկում է ուղարկել այնտեղ չէրքէզներից մի մասը։ Խալիլ Ղանէմ էֆէնդին պատասխանում է թէ Դամասկոս գտնված ժամանակ, չէրքէզների մի քանի ղէխաւորներ իրանց խումբերով այնտեղ եկել և տէրութիւնից հողեր տրվել են նրանց, բայց այնտեղի կլիման սաստիկ շոգ լինելով չեն կարողացել տանել և գաղթել են դէպի Բէրիայի (Հալէբ) կողմերը։ Բերիայի երեսփոխան Նաֆի էֆէնդին էլ յայտնելով թէ Մէսքէնէէն մինչև Բաբիլոն (Բաղդադ) ընդարձակ և անմարդաբնակ տեղեր կան, առաջարկում է չէրքէզներին այնտեղ ուղարկել որ այդ անմշակ մնացած դաշտերը մշակեն։ Իսկ Բաղդադի երեսփոխան Աբդ-իւլ-Թէզակ էֆէնդին պատասխանել է թէ չէրքէզները չեն կարող բնակվել այն տեղի պէտէվիների հետ և իրանց մէջ ամեն օր կռիւ և սպանութիւն անպակաս կը լինեն։ Անատոլիայի (Հայաստան) երեսփոխաններից շատերն էլ յայտնել են թէ ինչ սոսկալի անկարգութիւններ կը ծնին, եթէ չէրքէզներին բնակեցնեն Անատոլիայի նահանգներում։ Վերջապէս երեսփոխանական ժողովի այդ նիստում չեն կարողացել որոշել թէ ուր յարմար կը լինի չէրքէզներին բնակեցնել, որովհետև ամեն տեղի երեսփոխաններն էլ մերժել են նրանց։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, մարտի 7-ին։ Պետական բանկի 5% տոմակ առաջին շրջանի արժէ 95 ր. 75 կօպ., երկրորդ 95 ր. 25 կօպ., երրորդ 95 ր., չորրորդ 94 ր. 75 կօպ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմակը արժէ 228 ր. 75 կօպ., երկրորդ 225 ր. 25 կ., արևելեան $93^1/_8$։ Պոլուիմպէրեալ 7 ր. 78 կօպ։ Տրամադրութիւնը թոյլ է։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Մեր անցեալ համարի, հեռագիրների մէջ կարդալիս մի խոշոր սխալ մտաւ։ Վիէննայի հեռագրի մէջ փոխանակ ասելու «Ռումինիան հակառակ է իր երկիրներից մինը ուրիշ պետութեան տալուն», տպված է՝ «Ռումինիան հակառակ էր իր ընկերներից մէկը ուրիշ պետութեանը տալուն։»

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՆԵՐ

ОБЪ ИЗДАНІИ ВЪ 1878 ГОДУ ВЪ БАКУ ГАЗЕТЫ БАКИНСКІЯ ИЗВѢСТІЯ

ГОДЪ ТРЕТІИ.

Цѣна газеты на годъ въ Баку съ доставкой 5 р., на полгода—3 р., на три мѣсяца 1 р. 75 к., въ мѣсяцъ 75 к. Съ пересылкой во всѣ города имперіи на годъ 6 р., на полгода 3 р. 50 к., на три мѣсяцъ 2 р., на 1 мѣсяцъ 90 к.

Подписка принимается въ Баку, въ домѣ Дадашева, на Молютинской улицѣ, близъ гостиницы „Кавказъ" и въ Бакинскомъ Обществѣ Взаимнаго Кредита.

Иногородные адресуютъ свои требованія исключительно: *въ Баку въ редакцію Бакинскихъ Извѣстій.*

Կառավարութեան թոյլտուութեամբ այս փետրվար ամսի 18-ից բացվեցաւ ԹԻՖԼԻՍՈՒՄ, Միքայէլեան կամուրջի վրա, Միրզոեվի տանը № 1, 2, նոր գրախանութ «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑ» (Центральная книжная торговля) անունով։ Գրախանութում վաճառվելու են ամենատեսակ դասագրքեր հայերէն, ռուսերէն և ուրիշ լեզուներով. նոյնպէս լինելու է մեծ ընտրութիւն ընթերցանութեան գրքերի։ ԳՐԱԽԱՆՈՒԹԸ նպատակ ունի իր ճշտութեամբ և ձեռնտու վաճառմամբ նպաստել կրթութեան գործին, մանաւորապէս մեր հայ ուսումնասէրներին։ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ կը ծախվին նմանապէս տեղական պարբերական թերթերը։ Պատուէրները կը կատարվին ամենայն արագութեամբ։ Անփող պատուէրները, մանաւանդ անծանօթ տեղերից, անկատար կը մնան։ Օտար քաղաքացիք կարող են դիմել այս հասցէով Тифлисъ «Центральная книжная торговля Михайловскій Мостъ, домъ Мирзоева № 1, 2։

ԵՂԲԱՐՔ Ն. Գ. ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ
Ս. ՏԷՐ-ԻՍՐԱՅԷԼԵԱՆ

3—10

ԼԱՄՊԱՆԵՐԻ ԵՒ ՆԱՒԹԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ

Որ գտնվում է Գօլովինսկի պրոսպեկտի վրա Բէյլոի տանը, ստացվել է մեծ քանակութեամբ նաւթ առաջին տեսակից Բաքուի առաջնակարգ գործարաններից։ Ծախվում է ֆունտը 13 կոպ., որ քաչի և գնի ճշդութիւնը ապացուցանելու համար տալիս ենք վկայագրեր (կվիտանցիայ)։ Ընդունում ենք նոյնպէս հասցնել գնողներին պաչտոնական տներում, կաղարմէքում, ուսումնարաններում պակասաւոր գներով, վճարը ամսուայ վերջը ստանալով։ Խանութումս գտնվում է յատ տեսակ ԼԱՄՊԱՆԵՐ և ԼԱՄՊԱՅԻ ՊԱՏԿԱՆԵԼԻՔՆԵՐ, որոնց լաւ յատկութեան համար պատասխանատու ենք։ Ծախվում են աւելի ԱՐՔԱՆ ԳՆՈՎ, քան թէ առաջ։

Ա. Լիլիփարեանց

ՄԷԿ երիտասարդ ցանկանում է ունենալ տներում ՄԱՍՆԱՒՈՐ ԴԱՍԵՐ Պատրաստում է նոյնպէս գիմնազիայի ԱՌԱՋԻՆ, ԵՐԿՐՈՐԴ և ԵՐԲՈՐԴ դասատուների համար Հասցէն կարէլի է իմանալ «Մշակի» խմբագրատանը

Молодой человѣкъ желаетъ имѣть *частные уроки.* Приготовляетъ дѣтей въ первый, второй и третій классы гимназіи. Адресъ можно узнать въ редакціи „Мшакъ".

6—8

Въ книжномъ магазинѣ Ушіарова продается книга и описаніе древностей города Тифлиса, соч. Платона Іосселіани. Цѣна 50 к.

Ուշիարովի գրքերի խանութում ծախվում է «Թիֆլիսի հնութիւնների նկարագրութիւնը» հեղ. Պլատոն Իոսելիանի, գինը 50 կ.։ 4—4

ԹԻՖԼԻՍԻ Մասնաժողովը յօգուտ Թիւրքիայից դէպի Անդրկովկաս գաղթականների յայտնում է որ յօգուտ կարօտեալ գաղթականների ընդունվումեն ամեն տեսակ հին և նոր չորեր։ Պահեստը գտնվում է Արծրունու քարվանսարայի մէջ։ Նուիրատուները թող բարեհաճեն բերել կամ ուղարկել իրանց այդ նուէրները նախկին Իվանովի այժմ Յովհաննիսեանի ընթերցարանը, Դվորցովի փողոց, Արծրունու տուն, որտեղ և կը տրուին տպված տոմսակներ իրանց ընծայաբերութեան համար։

14—20 (1)

ԹԻՖԼԻՍԻ Մասնաժողովը յօգուտ գաղթականների յայտնում է որ, դրամական նուիրատուութիւնները յօգուտ գաղթականների ընդունվում են «Մշակ» և «Тифл. Вѣстн.» լրագիրների խմբագրութիւնների մէջ և «Փորձ» հանդիսի խմբագրատան մէջ։ Նոյնպէս ընդունվում են դրամական նուիրատուութիւնները և պ. Զիթախօվի կանտորայում, Շադլինսկի քարվանսարայում, (Բազազխանի եան)։

14—20 (1)

КОНТОРА ГАЛЛЕРЕИ АРЦРУНИ

ОТКРЫТА КАЖДЫЙ ДЕНЬ КРОМѢ ВОСКРЕСНЫХЪ ДНЕЙ отъ 9 часовъ утра до 2 часовъ пополудни

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵԱՅԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

ԲԱՑ Է ԱՄԵՆ ՕՐ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9 ժամից մինչև 2 ժամ

կէսօրից յետոյ բացի ԿԻՐԱԿԻ օրերից։

Լոյս տեսաւ «ԱԽԱՋԱԿ ՕՏԵՎԻ ԳՈՐԾՔԵՐԸ» կամ «Հայրը ցանեց, որդին հնձեց» անունով բրոշիւրան։ Գինն է 10 կոպ։ Ցանկացողները կարող են դիմել հետևեալ հասցէով. Тифлисъ, Вильгельмъ Гроссъ, Столярная фабрика Ф. Зетцера, въ колоніи. Մենք ինքներս խոստովանվում ենք, որ մեր այս առաջին աշխատութիւնը թերութիւններ կունենայ, որովհետև որպէս անփորձ երիտասարդ շատակեցինք շուտով լոյս ընծայել։ Պատրաստ ունենք մի գրքոյկ «ՈՐԲ ԳԷՈՐԳԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ» վերնագրով։ Եթէ մեր նիւթական միջոցները կը ներեն, այդ էլ կը նուիրենք հայ գրականութեանը։

2—8

ԳՈՐԾԱԿԱՏԱՐ ԵՒ ՀԱՇՈՒԵՊԱՀ

Փորձված վաճառականական գործերում, գիտէ կարևոր լեզուները, ցանկանում է տեղ ունենալ, թէ վաճառականի մօտ և թէ ուրիշ ծառայութեան մէջ։ Պատրաստ է և քաղաքից դուրս ծառայել։ Հասցէն. «Մշակի» խմբագրատանը։

ПРИКАЗЧИКЪ

Опытный, какъ по операціонной, такъ и по письменной части. Знаетъ необходимые языки, ищетъ мѣсто, согласенъ и на выѣздъ. Адресъ: Редакція газеты „Мшакъ"

4—5

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ ՆՈՐ ՍՏԱՑՎԵԼ են ՊԱՐՏԻԶԻ ԲՈՅՍԵՐԻ ԵՒ ԾԱՂԻԿՆԵՐԻ ՍԵՐՄԵՐ, որոնք ծախվում են Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան կոմմիսիօներ Լարշէի դէպօում, որ գտնվում է Գօլովինսկի պրոսպեկտի վրա № 11։

2—10

ՄԷԿ Սապէօր օֆիցեր ՓՆՏՈՒՄ Է ՊԱՐԱՊՄՈՒՆՔ (գծեր և պլաններ շինել, դասեր տալ)։ Հասցէն հետևեալն է։ Արտիլերիսկայիա փողոց, Յարութիւնովի տուն, զենուորական Գիմնազիայի դէմ, առաջին յարկում։

2—3

ՄԱՐՏԻ 8. ՏԵՂԵԿԱՑՈՅՑ ԹԻՖԼԻՍ 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Մարտի 7-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պոլուամպերիալը)	7	80
Հին 82 պր. մ. արժ. 1000 մ.	1350	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1170	—
Վիպրիչների 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիպրիչնի »	235	—
Մարսելի կուրսը 270—	270	—
Լոնդոնի կուրսը Օդեսայի վրա.	9	15
Վենայի կուրսը ամէ 121 գլ.	100	—
Դաւրեժի բարաթը. . .	5	60
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .		
Փօթի-Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	125	—
Շաքարը քրօցկու . .	7	80
» միւս տեսակը.	7	70
» չաքարաւազը .	6	—
» արանգվաը. .	6	50
» մաքսը վճարած	12	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	7	50
Միւս տեսակը հին սերմից.	6	80
Բուրդը թուչի . . .	7	—
» թարաքամի .	4	—
Ալիւր Շորագալու . .	1	80
» Երևանի. . . .	—	—
Գարին.	1	20
Մոմը բնաճարպի (стеар.)	13	80
Մեղաքս Նուխվայ. . .	180	—
Կախեթունը.	110	—
Կոկոնը Նուխվայ (լուծ.)	35	—
Ֆրիգոնը (լասը) Ագուլեաց	45	—
Կոֆէն մսկօի. . . .	26	—
» լիվանի . . .	—	—
» մարտինկոյինը	28	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . .	3	
Անգլիա. . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծննդկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում սմիսը 30—50 բուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 բուբլ, իսկ ճանաւոր սենեակներում 30 բուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անանովի։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րօպէ առաւօտեան։ Մինչև Միխայլօվո (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րօպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլօվո.	1. 29	11. 57
Ռիոն . . .	6. 47	
Փօթի . . .	9. 40	

	առաւօտ.
Փօթիից . .	9. 13
Ռիոն . . .	12. 13
Միխայլօվո. .	5. 39
Գօրի. . . .	7. 5
Թիֆլիս. . .	9. 31

1	37
4	8
7	56

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . .	3. 20	2. 40	1. 33
Սուրամ	5. 22	3. 92	2, 18
Ռիոն. . .	9.	6. 75	3. 75
Փօթի .	13. 1	9. 75	5· 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փօստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փօստը ստացվումէ Թիֆլիսում ամեն օր։ Բաղուի տարակից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տարակից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տարակից՝ չորեքշաբթի և կիրակի։ Բելիկլիչի տարակից՝ երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ	կոպ.
Բաց նամակը արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . . .	8
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. Վէրմիշէվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Քուչարեանց վիրաբուժական և ականջի հ. Սօկոլով երեխաների և ներքին հ.։

Երեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բէյլիս աչքի հ. Ա. Բախուտով, կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան, Բակատ սիֆիլիտական և կաշու հ.

Չորեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Դուբէլիր կրծքային և երեխաների հ. Բակատ կրծքային և ջղային Սօկոլով վիրաբուժական հ.

Հինգշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Կ. Բախուտով, կանանց և ջղային հ. Բակատ վենեական և կաշու հ.

Ուրբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Բախուտով մանկաբարձութեան, կանանց և երեխաների հ. Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների հ.

Շաբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Դուբէլիր երեխաների և կրծքային հ. Բէյլիս աչքերի հ. Բակատ կրծքային և ջղային հ. Սօկոլով վիրաբուժական հ.

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՄԵՆՆԵՐ

—ԱԽԱԼՑԻԽ. Օր. Ե. Մ. Ուղարկեցէք յօդուածը, մեծ ուրախութեամբ կը տպենք, մանաւանդ եթէ նոյնքան լաւ կը լինի, ինչքան ձեր նախկին յօդուածը։

—ԿԱԽ. Պ. Ձեր ուղարկած համարները կուղարկենք առաջիկայ փօստով։

—ԹԻՖԼԻՍ. Ս. Ի—. Ձեր ուղարկած 12 բուբլ թատրօնի համար հասցրինք Մարիամեան ուսումնարանի տեսուչ Ն. Ա.-ին։

—ՇԱՄԱԽԻ. Հ. Ձեր նամակը դեռ չենք կարդացել, կարդալուց յետոյ կը յայտնենք տպագրութեան մասին։

—ՄՕՍԿՎԱ. Քալանթար. Ուրախութեամբ կը տպենք ձեր յօդուածը, ուղարկեցէք շարունակութիւնը։

Дозволено Цензурою 7 Марта 1878 г. Тифлисъ.
Типографія Мартиросіанца
Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ